2024 թ. գարուն. ԵԿԱ-ի տնտեսական զարգացումները

Ամփոփագիր

Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԵԿԱ) ձևավորվող շուկաներում և զարգացող երկրներում աճն անցյալ տարի բարձրացավ՝ 2022 թ. 1.5 տոկոսից կազմելով 3.3 տոկոս, արտացոլելով Ռուսաստանի Դաշնությունում և Ուկրաինայում անցումն տնտեսական կրճատումից ընդլայնմանը և Չինաստանում ավելի առողջ վերականգնմանը: Սա կարելի է համեմատել 2010-2019 թթ. -ի ընթացքում այս տարածաշրջանի 3.1 տոկոս միջին աճին և 2000-09 թթ. ընթացքում 5.1 տոկոս միջին աճին:

Առանց Ռուսաստանի և Ուկրաինայի, տարածաշրջանի աճը 2023 թ. թուլացավ՝ 2022 թ. 4.8 տոկոսից 2023 թ. կազմելով 3.1 տոկոս՝ առևտրային խոշոր գործընկերների տնտեսական աճի տեմպի կտրուկ դանդաղման, ֆինանսական պայմանների զգալի խստացման և կենսապահովման ծախսերի ճգնաժամի ձգձգվող ազդեցությունների հետևանքով: Չինաստանի տնտեսության վերականգնման դանդաղ տեմպի և ապրանքների համաշխարհային գների իջնելու հակազդեցությունները բացասաբար անդրադարձան նաև ԵԿԱ-ի ապրանքներ արտահանողներ որոշ երկրների վրա: ԵԿԱ-ի երկրների գրեթե երկու-երրորդում անցյալ տարի տնտեսական աճի տեմպը 2022 թ.-ի համեմատ ավելի դանդաղ էր և 2023 թ. աճի գնահատականների գրեթե մեկ երրորդն իջեցվել է 2024 թ. հունվարի կանխատեսումների համեմատ:

Գնաճը՝ որը 2022 թ. -ի կենսապայմանների և սպառման համար հիմնական ցնցումն էր, նվազել է կտրուկ և շատ ավելի արագ, քան ավելի վաղ սպասվում էր՝ պարենի և էներգակիրների ավելի ցածր գների և դրամավարկային ավելի խիստ քաղաքականությունների շնորհիվ: Սպառողական գների տարեկան գնաճի միջնարժեքը, 2022 թ. սեպտեմբերի գրեթե 16 տոկոս բարձրակետից նվազեց՝ 2024 թ. հունվարին կազմելով 4.2 տոկոս: Չնայած գնաճի նվազմանը՝ 2018-2019 թթ.-ի համեմատ գների մակարդակը բարձր է 40 տոկոսով, իսկ սննդամթերքի գներինը՝ 50 տոկոսով: 2022 թ. կենսապահովման ծախսերի ճգնաժամը շարունակում է ազդել տնային տնտեսությունների վրա՝ չնայած անցյալ տարի իրական եկամուտների նշանակալի աճին:

Մեծ հավանականությամբ տարածաշրջանի դիմակայուն տնտեսական ակտիվությունը պահպանվի, սակայն կանխատեսվում է, որ այս տարի աճը կդանդաղի՝ քանի որ համաշխարհային ավելի թույլ տնտեսությունը, Չինաստանում տնտեսական աճի տեմպի դանդաղումը և ապրանքների ավելի ցածր գները կազդեն տարածաշրջանի աճի հեռանկարի վրա : Աճի տեմպի դանդաղումը գլխավորապես արտացոլում է Ռուսաստանում և Ուկրաինայում ավելի թույլ ընդլայնումը և Թուրքիայում աճի թուլացումը, քանի որ խիստ քաղաքականությունն այնտեղ պահպանվում է: Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում հավանական է, որ աճն իջնի՝ նաև դրամական փոխանցումների նվազման պայմաններում: Սակայն Կենտրոնական Ասիայում և Արևմտյան Բալկաններում աճի լուրջ բարձրացում է սպասվում՝ աշխատանքի շուկայում, աշխատավարձերի և ներդրումների հզոր վերականգնմամբ, որին կխթանեն ԵՄ միջոցները:

Հեռանկարը հանդիպում է բազմաթիվ խոչընդոտների և սահմանափակումների: Առևտրային հիմնական գործընկերների սպասվածից դանդաղ վերականգնումը, հատկապես՝ եվրագոտում, դրամավարկային սահմանափակող քաղաքականությունները և աշխարհաքաղաքական զարգացումների սրացումը կարող են տարածաշրջանում աճն է՛լ ավելի նվազեցնել: Հարկաբյուջետային կոնսոլիդացման հետագա ձգձգումները կսահմանափակեն հարկաբյուջետային հնարավորությունները (տարածքը) և կարող են փոխառությունների ներգրավման բարձր ծախսատարությունը պահպանել: Տարածաշրջանային և աշխարհաքաղաքական լարվածությունների սրացումը կարող է աճը նվազեցնել՝ սպառողների և ներդրողների վստահության խաթարմամբ:

Աշխարհաքաղաքական ռիսկերի բարձրացման և քաղաքականության զգալի անորոշության պայմաններում ներդրումների աճը ԵԿԱ-ում, որն արդեն իսկ շատ ավելի դանդաղ է, քան մինչև համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, կարող է է՛լ ավելի թուլանալ, հատկապես՝ կառուցվածքային բարեփոխումների խորացման ուղղությամբ դանդաղ առաջընթացի դեպքում: Թույլ ներդրումները կընկճեն երկարաժամկետ աճը ԵԿԱ-ում և ավելի կձգձգեն եկամուտների զուգամիտումը:

Աճի և զուգամիտման դանդաղման ֆոնին, *«ԵԿԱ-ի տնտեսական նորությունների»* հրապարակման առանցքում է տարածաշրջանում բարգավաճման և արտադրողականության խթանման մեջ բիզնեսի դինամիզմի և նորարարության դերը:

ԵԿԱ-ի տնտեսական զարգացան պատմությունը պլանայինից շուկայական տնտեսության անցման, ընդգրկուն և խորը կառուցվածքային բարեփոխումների խորացման և որպես աճը պայմանավորող հիմնական գործոն՝ մասնավոր հատվածի և բիզնեսի ի հայտ գալու մասին է: Երեք տասնամյակից էլ քիչ ժամանակահատվածում Եվրամիությանն անդամակցեց մեկ տասնյակից ավելի ԵԿԱ երկիր: Այս երկրների հաջողված անցումը դեպի ԵՄ-ի ինտեգրված շուկայական տնտեսություններ, որոնք ունեն ուժեղ ինստիտուտներ և արտադրական կառույցներ, ցույց է տալիս, թե բարեփոխումները որքան հեռու, այդ թվում՝ եկամտային բարձր կարգավիճակի են հասցրել տարածաշրջանի որոշ երկրներ: Սակայն 1990-ականների կառուցվածքային բարեփոխումների հավակնոտ օրակարգի ընթացքը դանդաղել է ԵԿԱ-ի միջին եկամտով երկրներից շատերում և դրանց անցումը շուկային դեռևս շարունակվում է:

Վերջին տասնամյակում ԵԿԱ-ում արտադրողականության ավելի թույլ աճի հետևանքով դանդաղել է զարգացած տնտեսությունների հետ եկամուտների

զուգամիտումը: Թեև ձևավորվող շուկաներում և զարգացող տնտեսություններում համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո և զարգացած տնտեսություններից շատերում 1970 թ. -ից ի վեր արտադրողականության աճի դանդաղումը լայնահենք էր, այդ անկումն ամենակտրուկն ԵԿԱ-ում էր: Արտադրողականության աճը պայմանավորող հիմնարար գործոնները, այդ թվում՝ ինստիտուցիոնալ և շուկայական բարեփոխումների խորացման և տեխնոլոգիաների ընդունման և նորարարության ուղղությամբ առաջընթացը, որոնք բոլորն էլ առանցքային են մասնավոր հատվածի կողմից առաջնորդվող աճի հնարավորություն ստեղծելու համար, ԵԿԱ-ում թուլացել են: Տարածաշրջանի շատ երկրներ սահմանափակ առաջընթաց են գրանցել վերջին տարիներին ավելի արդյունավետ կորպորատիվ և շուկայական հաստատությունների ստեղծման հարցում:

Տարածաշրջանում բիզնեսի դինամիզմի և նորարարության բարելավման զգալի տեղ կա: ԵԿԱ-ում ընկերությունները նվազ արտադրողական և նորարար են՝ Եվրոպայի զարգացած տնտեսությունների համեմատ: Ընկերությունների մուտքի և ելքի ցուցանիշները ցածր են, և ընկերությունները ժամանակի ընթացքում առանձնապես չեն աճում՝ վկայելով նվազ մրցակցային և դինամիկ բիզնես միջավայրի մասին, որտեղ ընկերությունները, որպես կանոն, ավելի քիչ նորարարություն են կատարում, ավելի քիչ գիտելիք են կլանում և հաճախ նվազ արտադրողական են դառնում ժամանակի ընթացքում :

Բիզնեսի դինամիզմը ԵԿԱ-ում խթանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ մի քանի մարտահրավերների, այդ թվում՝ կատարելագործել մրցակցային միջավայրը, նվազեցնել պետության ներգրավվածությունը տնտեսությանում, էապես բարձրացնել կրթության որակը և ֆինանսների մատչելիությունը: Թեև նշված մարտահրավերների դիմագրավումը տարբեր երկրներում տարբեր կերպ կդրսևորվի, դրանց անդրադառնալն անհրաժեշտ պայման է ավելի բարձր տնտեսական աճի ապահովման և միջին եկամտի թակարդի հաղթահարման համար: Ավելին, համաշխարհային շուկաներում ինտեգրման խորացումն առանցքային կլինի՝ օգնելու արագացնել թե՛ նոր տեխնոլոգիաների ընդունումը և թե՛ տարածաշրջանի շատ տնտեսությունների փոքր չափով պայմանավորված ընկերություններին պոտենցիալ աճի սահմանափակումների հաղթահարումը. Տարածաշրջանի արևմտյան մասի երկրների համար մարտահրավեր է նաև անբարենպաստ ժողովրդագրությունը, որտեղ բնակչության նվազմամբ պայմանավորված աշխատուժի առաջարկի սղության հարցը սրվում է երիտասարդ և հմուտ աշխատողների արտագաղթի բարձր մակարդակի պատճառով: